Կազմուած է 12 յուլիս 2025թ.

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է
«ԱԶԱՏԱԶԷՆ» ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

«12» յուլիս 2025թ.

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆԱՒՐԷՆ՝

Նաղաշ Բաղդասարյան

(ստորագրութիւն)

ՏՊԱԳՐՈՒԱԾ Է ԸՆԴԱՄԷՆԸ 2 ԱՒՐԻՆԱԿԻՑ
ԱՒՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՈՒԱԾ Է

ՀՀ ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
28.09.2021Թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.1197465
ՀՎՀՀ 00243558
24.10.2024 Թ. ԳՐԱՆՑՈՒԱԾ

ԿԱՆԱՒՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԹԻՒ ՍՍԿ 2

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ
ԳՐԱՆՑՈՒԱԾ Է
ՀՀ ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«26» 12 2025թ.

ԱՇԽԱՏԱԿԻՑ

ԿԱՆԱՒՆԱԴՐՈՒԹԻՒՆ
«ԱԶԱՏԱԶԷՆ» ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

(Նոր խմբագրութիւն)

2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՅԹՆԵՐ

1.1. «Ազատազէն» կրթական հասարակական կազմակերպութիւնը (այսուհետ՝ Կազմակերպութիւն) հասարակական միաւորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրութեան հիման վրայ աւրէնքով սահմանուած կարգով միաւորուել են փիզիկական եւ/կամ իրաւաբանական անձինք: Կազմակերպութիւնը ունի ոչ առեւտրային կազմակերպութեան կարգավիճակ: Կազմակերպութիւնն իր գործունեութիւնը ծաւալում է ռազմակրթական, ռազմահայրենասիրական, ռազմամարզական, ռազմագիտական, ռազմասպորտային, ռազմարտադրական եւ կամ այդ հանրաւգուտ ոլորտներում: Կազմակերպութիւնը հիմնադրուել է 2021 թ. աւգոստոսի 15-ի հիմնադիր ժողովի միաձայն որոշմամբ եւ գործում է Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեանը, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիական աւրէնսգրքին, «Հասարակական կազմակերպութիւնների» մասին Հայաստանի Հանրապետութեան աւրէնքին, Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագրերին, իրաւական այդ ակտերին եւ այս կանաւնադրութեանը համապատասխան:

1.2. Կազմակերպութեան գործունեութիւնը հիմնուած է աւրինականութեան, խտրականութեան բացառման, բարեխղճութեան, անդամների շահերի ընդհանրութեան, անդամութեան կամաւորութեան, հաշուետուողականութեան, ինքնակառավարման եւ հրապարակայնութեան վրայ:

1.3. Կազմակերպութիւնը գործում է Հայաստանի Հանրապետութեան ողջ տարածքում եւ աւտարերկրեայ պետութիւններում՝ այդ պետութիւնների աւրէնսդրութեանը համապատասխան:

1.4. Կազմակերպութեան անուանումն է՝

Կազմակերպութեան հայերէն անուանումը «Ազատազէն» կրթական հասարակական կազմակերպութիւն

Կազմակերպութեան հայերէն անուանումը կրճատ՝ «Ազատազէն» ԿՀԿ

Կազմակերպութեան անգղիարէն անուանումը՝ „Azatazen" Educational Non-Governmental Organization

Կազմակերպութեան անգղիարէն անուանումը կրճատ՝ „Azatazen" NGO

Կազմակերպութեան ռուսերէն անուանումը՝ Образовательная общественная организация «Азатазен»

Կազմակերպութեան ռուսերէն անուանումը կրճատ՝ «Азатазен» ООО.

1.5. Կազմակերպութեան գտնուելու վայրն է՝ ՀՀ, ք. Երեւան, Ծարաւ Աղբեւր 134/1 շէնք, հեռախաւս՝ +374 41 54 20 02 , եղ. հասցէ՝ info@azatazen.am:

1.6. Կազմակերպութիւնն ունի կլոր կնիք, որի վրայ շրջանաձեւ երեք լեզուով (հայերէն, անգղիարէն եւ ռուսերէն) իրար տակ գրուած է Կազմակերպութեան ամբողջական

անուանումը: Կենտրոնում երեք լեզուով (հայերէն, անգղիարէն եւ ռուսերէն) իրար տակ գրուած է Կազմակերպութեան կրճատ անուանումը, իսկ ներքեւում գրուած է ՀԿՀՀ-ն:

1.7. Կազմակերպութիւնը համագործակցում է ինչպէս ՀՀ պետական, ոչ պետական մարմինների եւ կազմակերպութիւնների, այնպէս էլ արտասահմանեան եւ միջազգային կազմակերպութիւնների, ընկերութիւնների եւ ուսումնական հաստատութիւնների հետ:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպութեան գործունեութեան նպատակներն են՝

2.1.1. կազմակերպել ուսումնամարզական հաւաքներ, ռազմասպորտային եւ ռազմակրթական դասընթացներ, կրակային պատրաստութեան դասընթացներ, ռազմասպորտային մրցոյթներ, հրաձգութեան մրցոյթներ, սպորտային հրաձգութեան դասընթացներ եւ մրցոյթներ,

2.1.2. նպաստել ռազմական, ռազմուսումնական, զէնք ձեռք բերելու, կրելու եւ կիրառելու մասով աւրէնսդրական բարելաւումներին, սպորտային հրաձգութեան զարգացմանը,

2.1.3. նպաստել զէնք կրելու եւ կիրառելու մշակոյթի ձեւաւորմանն ու զարգացմանը Հայաստանում,

2.1.4. նպաստել Հայաստանում զինագործութեան զարգացմանը,

2.1.5. նպաստել Հայաստանում ռազմասպորտային եւ սպորտային հրաձգութեան մրցոյթներ կազմակերպելու ենթակառուցուածքների զարգացմանը,

2.1.6. ուսումնասիրել հայկական եւ համաշխարհային ռազմական, ռազմաքաղաքական փորձը, կազմակերպել գիտաժողովներ, սեմինարներ,

2.1.7. աջակցել ռազմական, զինուորական, ռազմագիտական եւ այդ ոլորտներում մասնագիտացող երեխաների, պատանիների եւ երիտասարդների մասնագիտական զարգացմանը, վերջիններիս եւ մասնագիտացուած անձանց ներգրաւուածութեանը տեղական եւ միջազգային գիտակրթական հետազաւտութիւններին:

2.2. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպութիւնը իրականացնում է աւրէնքով սահմանուած կարգով գործունեութեան հետեւեալ տեսակները

2.2.1. համագործակցում է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային եւ աւտարերկրեայ համանման կազմակերպութիւնների, Հայաստանի Հանրապետութիւնում գրանցուած այդ կազմակերպութիւնների եւ փիզիկական անձանց հետ,

2.2.2. տրամադրում է կրթաթոշակներ, դրամաշնորհներ եւ այդ նիւթական եւ/կամ ոչ նիւթական աջակցութիւն,

2.2.3. կազմակերպում եւ իրականացնում է փորմալ եւ ոչ փորմալ կրթական ծրագրեր, աշխատանոցներ, ամառային դպրոցներ եւ այլն,

2.2.4. կազմակերպում գիտաժողովներ, համաժողովներ, մասնագիտական քննարկումներ, ցուցահանդեսներ, մրցույթներ եւ այլ գիտակրթական միջոցառումներ:

2.3. Կազմակերպությունը ՀՀ աւրէնսդրութեամբ սահմանուած կարգով կարող է զբաղուել ձեռնարկատիրական գործունեութեամբ: Կազմակերպությունն իրաւունք ունի իր կանաւնադրութեամբ սահմանուած նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնաւրինել իր գոյքը եւ գործունեութեան արդիւնքները, ինչպէս նա եւ իրաւունք ունի աւրէնքով սահմանուած կարգով ստեղծել առեւտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

2.4. Կազմակերպությունը վարում է ձեռնարկատիրական գործունեութեան առանձնացուած հաշուառում՝ դրա վերաբերեալ տեղեկությունները ներառելով աւրէնքով նախատեսուած հաշուետուությունների: Կազմակերպութեան իրականացրած ձեռնարկատիրական գործունեութեան արդիւնքում ստացուած շահույթը աւգտագործուում է միայն Կազմակերպութեան կանաւնադրական նպատակներով:

2.5. Կազմակերպությունը ՀՀ աւրէնսդրութեամբ սահմանուած կարգով կարող է հիմնել լրատուութեան միջոցներ, տեղեկատուություն տարածել իր գործունեութեան վերաբերեալ զանգուածային լրատուութեան եւ թուային կապի միջոցներով:

3. ԱՆԴԱՄՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԱՆԴԱՄԱԳՐՈՒԵԼՈՒ ԵՒ ԱՆԴԱՄՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպությունն ունի անդամութեան երկու տեսակ՝ Լիիրաւ եւ Աջակից:

3.2. Կազմակերպութեան Լիիրաւ անդամ կարող են դառնալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի 18 տարին լրացած փիզիկական անձինք, որոնք ունեն ՀՀ աւրէնսդրութեամբ սահմանուած հարթափող կամ ակաւսաւոր զէնք, Կազմակերպութեան Աջակից անդամ են 6 ամիս, ունեն կազմակերպութեան նուազագոյնը 5 (հինգ) այդ Լիիրաւ անդամի երաշխաւորությունը, ընդունում են այս կանաւնադրությունը, եւ կարող են լինել, եթե կատարում են անդամի համար կանաւնադրութեամբ նախատեսուած պարտաւորությունները, կանաւնաւոր վճարում են անդամավճարները:

3.3. Կազմակերպութեան Աջակից անդամ կարող են լինել ՀՀ եւ աւտարերկրեայ իրաւաբանական անձինք, ՀՀ քաղաքացի եւ աւտարերկրեայ փիզիկական անձինք, որոնք ընդունում են այս կանաւնադրությունը, ցանկանում են մասնակցել ու աջակցել կազմակերպութեան գործունեութեանը: Մինչեւ տասնչորս տարեկան անձը Կազմակերպութեան անդամ կարող է դառնալ իր ցանկութեամբ՝ աւրինական ներկայացուցչի դիմումի հիման վրայ: Տասնչորսից մինչեւ տասնութ տարեկան անձը Կազմակերպութեան անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրայ՝ աւրինական ներկայացուցչի գրաւոր համաձայնությամբ:

3.4. Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ հանդիսանալ Հայաստանի Հանրապետության նմանատիպ գործունեությամբ զբաղվող կազմակերպության խորհրդի նախագահ, խորհրդի անդամ կամ գործադիր մարմնի ղեկավար:

3.5. Կազմակերպության Լիիրաւ եւ Աջակից անդամների համար սահմանվում է անդամավճար, որի չափը եւ գանձումը կազմակերպելու կարգը սահմանում է Խորհուրդը:

3.6. Խորհուրդն իր հայեցողությամբ կարող է վերանայել Լիիրաւ եւ Աջակից անդամների անդամավճարի չափը, վճարման կարգն ու ժամկետները ոչ աւել, քան տարին մեկ անգամ:

3.7. Կազմակերպությանն անդամագրուելու եւ անդամութիւնից դուրս գալու կարգը՝

3.7.1. Կազմակերպությանն անդամագրուելու կամ անդամութիւնից դուրս գալու կարգը սահմանուած է Կազմակերպության Անդամակցության կարգում, որը հաստատուում է Խորհրդի կողմից,

3.7.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկութիւն ունեցող իրաւաբանական կամ փիզիկական անձը գրաւոր դիմում է ներկայացնում Գործադիր տնաւրէնին,

3.7.3. Կազմակերպության Աջակից անդամ դառնալու համար ստացուած դիմումները Գործադիր տնաւրէնը հաստատում կամ մերժում է իր հայեցողությամբ,

3.7.4. Կազմակերպության Լիիրաւ անդամ դառնալու համար դիմող փիզիկական անձը բացի անդամության դիմումից ներկայացնում է նաեւ իր գործունեութիւնը, Կազմակերպությանն անդամագրուելու նպատակը եւ մոտիւացիան՝ իր հայեցողությամբ գրաւոր կամ բանաւոր կերպով,

3.7.5. Կազմակերպության Լիիրաւ անդամ դառնալու համար ստացուած դիմումները Գործադիր տնաւրէնը ներկայացնում է Խորհրդի քննարկմանը,

3.7.6. Լիիրաւ անդամի անդամագրումը Կազմակերպությանը կատարուում է Խորհրդի քուէարկության արդիւնքում՝ Խորհրդի բոլոր անդամների ձայների 2/3 մեծամասնությամբ, սակայն պայմանով, որ դէմ քուէների քանակը չի գերազանցում Խորհրդի բոլոր անդամների 1/4-ը,

3.7.7. Ուղղակի ճանապարհով՝ առանց աջակից անդամ լինելու Լիիրաւ անդամի անդամագրումը Կազմակերպությանը կարող է կատարուել Խորհրդի բոլոր անդամների միաձայն քուէի արդիւնքում (Խորհրդի կոնսենսուսով), որի առկայության դէպքում դիմող փիզիզկական անձը կարող է ձեռք բերել լիիրաւ անդամի կարգավիճակ,

3.7.8. Կազմակերպության անդամն իրաւունք ունի իր հայեցողությամբ դուրս գալու Կազմակերպության անդամութիւնից,

3.7.9. Կազմակերպության անդամութիւնից դուրս գալու համար անդամը՝ դուրս գալու աւրուանից առնուազն 30 աւր առաջ, գրաւոր տեղեկացնում է Գործադիր տնաւրէնին իր մտադրության մասին՝ կատարելով իր գոյքային, դրամական կամ այլ

պարտաւորութիւնները Կազմակերպութեան առջեւ՝ մինչեւ Կազմակերպութիւնից դուրս գալու աւրը,

3.7.10. Կազմակերպութեան անդամի կողմից կազմակերպութեան խնդիրներին եւ նպատակներին հակադիր եւ խոչընդոտող գործունեութեան, եւ/կամ պարբերաբար անդամավճար չվճարելու համար Կազմակերպութեան Խորհուրդը, Խորհրդի նիստին ներկայ անդամների առնուազն 3/4 ձայների մեծամասնութեամբ, կարող է որոշում ընդունել անդամին հեռացնելու մասին,

3.7.11. Այն Լիիրաւ անդամը, ով երկու եւ աւել անգամ յաջորդաբար չի մասնակցել հերթական կամ արտահերթ Համագումարներին, Խորհրդի 3/4 ձայների մեծամասնութեան որոշմամբ նրա անդամութիւնը կարող է դադարեցուել,

3.7.12. Կազմակերպութեան Լիիրաւ անդամի կողմից Կազմակերպութեան վարքականաւնի որեւէ կէտի խախտման դէպքում Խորհուրդն իրաւունք ունի 3/4 ձայների մեծամասնութեամբ որոշում կայացնել տուեալ անդամին Կազմակերպութեան անդամութիւնից հեռացնելու մասին,

3.7.13. Կազմակերպութեան Լիիրաւ անդամի անդամութիւնից դուրս գալու կամ հեռացնելու դէպքում՝ Համագումարի որոշմամբ վաղաժամկէտ դադարեցուում են Կազմակերպութեան լիիրաւ անդամի լիազաւրութիւնները նաեւ որպէս Կազմակերպութեան Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահ, Վերստուգող կամ Անուանակարգային յանձնաժողովի անդամ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպութեան Լիիրաւ անդամն իրաւունք ունի՝

4.1.1. մասնակցել Կազմակերպութեան Խորհրդի նիստերին եւ կառավարման այլ մարմինների նիստերին,

4.1.2. Կազմակերպութեան կանոնադրութեամբ սահմանուած դէպքերում եւ կարգով ընտրել եւ ընտրուել Կազմակերպութեան կառավարման մարմիններում,

4.1.3. մասնակցել Կազմակերպութեան իրականացրած ծրագրերին եւ ծանաւթանալ Կազմակերպութեան կազմած փաստաթղթերին եւ տեղեկատուութեանը,

4.1.4. ծանաւթանալ Կազմակերպութեան մարմինների արձանագրութիւններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճէները,

4.1.5. Կազմակերպութիւնից պահանջել տեղեկութիւններ, ստանալ փաստաթղթերի պատճէներ՝ Կազմակերպութեան կանաւնադրութեան փոփոխութիւնների, մարմինների արձանագրութիւնների, որոշումների, գոյքի կառավարումից ստացուած դրամական

միջոցների վերաբերեալ, ինչպես նա եւ ստանալ նրա դրամական հաշուետուութիւնների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացութեան պատճէն, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

4.1.6. աւգտուելու Կազմակերպութեան գոյքից ու ծառայութիւններից Խորհրդի կողմից սահմանուած կանաւններին ու պայմաններին համաձայն,

4.1.7. վերադասութեան կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպութեան մարմինների որոշումները,

4.1.8. Հրաւիրել արտահերթ Համագումար Կազմակերպութեան Լիիրաւ անդամների 1/3-ի համաձայնութիւնն ունենալու դէպքում,

4.1.9. իրականացնել աւրէնքով սահմանուած այդ իրաւունքներ:

4.2. Կազմակերպութեան Աջակից անդամն իրաւունք ունի՝

4.2.1. մասնակցել Համագումարին,

4.2.2. աւգտուել Կազմակերպութեան գոյքից ու ծառայութիւններից Խորհրդի կողմից սահմանուած դէպքերում եւ կարգով:

4.3. Կազմակերպութեան Լիիրաւ եւ Աջակից անդամները պարտաւոր են՝

4.3.1. բարեխղճաւրէն կատարել Կազմակերպութեան կանաւնադրական պահանջները, կառավարման մարմինների որոշումները եւ իր կողմից ստանձնած պարտականութիւնները,

4.3.2. կանաւնաւոր վճարել անդամավճարը, որի չափը, վճարման կարգը եւ ժամկէտները սահմանում է Խորհուրդը:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կազմակերպութեան մարմինները

5.1.1. Կազմակերպութեան բարձրագոյն մարմինը Կազմակերպութեան լիիրաւ անդամների համագումարն է (այսուհետ՝ Համագումար),

5.1.2. Կազմակերպութեան ղեկավար եւ մշտական գործող մարմինը Կազմակերպութեան Խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ),

5.1.3. Կազմակերպութեան ներկայացուցչական մարմինը Կազմակերպութեան Խորհրդի նախագահն է (այսուհետ՝ Նախագահ),

5.1.4. Կազմակերպութեան գործադիր մարմինը Կազմակերպութեան գործադիր տնաւրէնն է (այսուհետ՝ Գործադիր տնաւրէն),

5.1.5. Կազմակերպութեան վերահսկող մարմինը Կազմակերպութեան վերստուգողներն են (այսուհետ՝ Վերստուգողներ):

5.1.6. Կազմակերպութեան անուանակարգային յանձնաժողովը Կազմակերպութեան խորհրդի անդամների թեկնածութիւններ առաջադրող մարմինն է (այսուհետ՝ Անուանակարգային յանձնաժողով):

5.2. Խորհուրդը

5.2.1. Խորհրդի անդամ կարող է դառնալ իւրաքանչիւր Լիիրաւ անդամ՝ Անունակարգային յանձնաժողովի կողմից Համագումարին ներկայացուած եւ Համագումարին մասնակիցների ձայների 3/4-ի մեծամասնութեամբ հաստատուած կանաւնակարգով: Նշուած կանաւնակարգի բացակայութեան պարագայում, բոլոր Լիիրաւ անդամները կարող են առաջադրուել,

5.2.2. Խորհուրդն ընտրուում է կազմակերպութեան Լիիրաւ անդամներից հերթական կամ արտահերթ Համագումարի ժամանակ,

5.2.3. Հերթական կամ արտահերթ Համագումարը կարող է անցկացուել համատեղ հաւաքի ձեւով կամ հեռակայ ձեւաչափով՝ ոչ պակաս քան խորհրդի բոլոր անդամների ձայների 3/4 մեծամասնութեամբ ընտրուած խորհրդի որոշմամբ,

5.2.4. Խորհրդի անդամ են դառնում Համագումարի ժամանակ առաւելագոյն քուէ ստացած առաջին 7 թեկնածուները: Խորհուրդ ընտրուած եւ ինքնաբացարկ չյայտարարած առաջին 7 հոգուց յետոյ հետագայում խորհրդի կազմում թափուր տեղ առաջանալու դէպքում այդ տեղը լրացուում է քուէների քանակով 7-րդ անդամին յաջորդող թեկնածուների կողմից, ովքեր Համագումարի ժամանակ ստացել են ոչ պակաս, քան ամբողջ ձայների 10 %-ը,

5.2.5. Խորհրդի քանակը չի կարող լինել 5 հոգուց պակաս: Նման դեպքում՝ կանաւնադրութեան ուժով, գումարուում է Արտահերթ Համագումար՝ համատեղ հաւաքի ձեւով ձեւաչափով,

5.2.6. Ընտրութիւնների ժամանակ Լիիրաւ անդամները ընտրում են խորհրդի 7 թեկնածու,

5.2.7. Եթե խորհրդում քննարկուում է խորհրդի որեւէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցուած անձի (ծնող, ամուսին, զաւակ, եղբայր, քոյր, ամուսնու ծնող, զաւակ, եղբայր եւ քոյր), այդ թուում որեւէ իրաւաբանական անձի գոյքային կամ այդ շահերի վերաբերեալ հարց, ապա խորհրդի տուեալ մասնակիցը քուէարկութեանը չի մասնակցում,

5.2.8. Խորհուրդն ընտրուում է 1 տարի ժամկէտով: Կազմակերպութեան միեւնոյն լիիրաւ անդամը կարող է ընտրուել խորհրդի անդամ 4 տարի անընդմէջ: 4 տարի անընդմէջ խորհրդի անդամ եղած միեւնոյն Լիիրաւ անդամի համար խորհրդի անդամ ընտրուելու իրաւունքը սահմանափակուում է 1 տարով,

5.2.9. Խորհուրդն Կազմակերպութեան ղեկավար եւ մշտական գործող մարմինն է, որն իր գործունեութիւնն իրականացնում է նիստեր անցկացնելու միջոցով,

5.2.10. Խորհուրդը իրաւասու է որոշել աուդիտ իրականացնող՝ կազմակերպութեան կողմից տրամադրած ողջամիտ բիւջէի շրջանակում, որը բաւարար է շուկայում մի քանի անկախ աուդիտորական ընկերութիւնների միջեւ ընտրութիւն կատարելու համար, որի շնորհիւ կապահովուի ստուգումների անկաշկանդութիւնը: Վճարովի աուդիտ կարելի է իրականացնել ոչ աւել քան տարեկան մեկ անգամ,

5.2.11. Խորհրդի նիստերը բաց են Կազմակերպութեան Լիիրաւ անդամների համար,

5.2.12. Խորհրդի հերթական նիստերը հրաւիրուում են Նախագահի եւ/կամ Խորհրդի անդամների եւ/կամ Գործադիր տնաւրէնի նախաձեռնութեամբ ըստ անհրաժեշտութեան, բայց ոչ պակաս, քան երկու շաբաթը մեկ անգամ,

5.2.13. Խորհրդի նիստի աւրը, վայրը եւ աւրակարգը յայտարարուում է ոչ ուշ, քան նիստից 3 աւր առաջ,

5.2.14. Խորհրդի հրատապ նիստը հրաւիրուում է Նախագահի, Գործադիր տնաւրէնի, Վերստուգողի, Խորհրդի անդամների մեկ երրորդի եւ/կամ Կազմակերպութեան Լիիրաւ անդամների առնուազն մեկ երրորդի պահանջով,

5.2.15. Խորհրդի նիստն իրաւազաւր է, երբ նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կէսից աւելին,

5.2.16. Խորհրդի անդամներն առանձին դէպքերում կարող են նիստին մասնակցել հեռակայ կարգով՝ առցանց միջոցներով,

5.2.17. Խորհուրդն որոշում է Կազմակերպութեան ընթացիկ գործունեութեան ուղղութիւնները, երաշխաւորում է Կազմակերպութեան ծրագրերը, հաստատում է Կազմակերպութեան վարքականաւնները,

5.2.18. Խորհրդի որոշումներն ընդունուում են նիստին ներկայ քուորում ապահոված անդամների ձայների պարզ մեծամասնութեամբ, եթե այս կանաւնադրութեամբ այդ բան սահմանուած չէ,

5.3. Խորհրդի բացառիկ իրաւասութիւնն է

5.3.1. Խորհրդի Նախագահի ընտրութիւնը,

5.3.2. Խորհրդի քարտուղարի ընտրութիւնը,

5.3.3. Կազմակերպութեան Գործադիր տնաւրէնի ընտրութիւնը, փոփոխումը, լիազաւրութիւնների վաղաժամկէտ դադարեցումը, վարձատրութեան կարգի եւ պայմանների սահմանումը,

5.3.4. տարին մեկ անգամ հաստատել Կազմակերպութեան Գործադիր տնաւրէնի հաստատուած Կազմակերպութեան գործունեութեան եւ գոյքի աւգտագործման

հաշուետուութիւնները, որոնք Խորհրդի հաստատմանն են ներկայացուում Վերստուգողի եզրակացութեան հետ միասին,

5.3.5. տարեկան Համագումարի աւրը, անցկացման վայրը եւ աւրակարգը որոշելը,

5.3.6. Խորհրդի Նախագահին անվստահութիւն յայտնելը, Խորհրդի քուէարկող ձայների 2/3 մեծամասնութեամբ, բայց ոչ աւելի վաղ, քան Նախագահի պաշտաւնի մեկնարկից 3 ամիս յետոյ,

5.3.7. Կազմակերպութեան առանձնացուած ստորաբաժանումների, մասնաճիւղերի, ներկայացուցչութիւնների, հիմնարկների ստեղծումը եւ լուծարումը:

5.4. Եթե Խորհրդի Նախագահի լիազաւրութիւնները դադարում են վաղաժամկէտ, Խորհրդի կողմից Նախագահին անվստահութիւն յայտնելու ճանապարհով, ապա Խորհուրը պարտաւոր է հրաժարական տալ եւ մեկ ամսուայ ընթացքում կազմակերպել արտահերթ Համագումար ու Խորհրդի արտահերթ ընտրութիւններ:

5.5. Խորհրդի նիստերն արձանագրուում են: Արձանագրութիւնը հաստատուում է Նախագահի եւ քարտուղարի ստորագրութիւններով:

5.6. Խորհուրդը հաստատում եւ վերահսկում է Կազմակերպութեան տարեկան բիւջէի հիմնական ուղղութիւնները, քննարկում է նախորդ հաշուետու ժամանակահատուածում գործունեութեան եւ բիւջէի կատարման հաշուետուութիւնները:

5.7. Խորհուրդը տարեկան մեկ անգամ Կազմակերպութեան բոլոր անդամներին հրաւիրում է Համագումարի, որտեղ ներկայացնում է նախորդ հաշուետու ժամանակաշրջանում կատարուած աշխատանքները, նախորդ հաշուետու ժամանակաշրջանի դրամական հաշուետուութիւնները եւ ապագայ ծրագրերը:

5.8. աւրէնքով նախատեսուած այդ լիազաւրութիւնների իրականացումը:

5.9. Խորհրդի անդամն իրաւունք ունի ցանկացած պահի ինքնաբացարկ յայտարարելու:

5.10. Խորհրդին կից եւ Խորհրդի կողմից կարող է/են ստեղծուել Խորհրդատուական կոմիտէ/ներ (այսուհետ՝ Խորհրդատուական կոմիտէ), որի/որոնց կազմը, քանակը, իրաւասութիւնները եւ գործունեութեան կարգի այդ մանրամասները սահմանում է Խորհուրդը:

5.11. Խորհրդատուական կոմիտէի որոշումներն ունեն խորհրդատուական բնոյթ: Խորհուրդը եւ Կազմակերպութեան այդ ղեկավար մարմիներն ի գիտութիւն են ընդունում Խորհրդատուական կոմիտէի ընդունած որոշումները Կազմակերպութեան ընդհանուր ռազմավարութեան եւ զարգացման վերաբերեալ:

5.12. Խորհրդատուական կոմիտէի անդամները կարող են Խորհրդի կողմից սահմանուած սահմաններում մասնակցել դրամահաւաքների/ֆոնդահայթայթման գործընթացների, ներկայացնել Կազմակերպութիւնը երրորդ անձանց շրջանակներում եւ այլն:

5.13. Խորհրդի Նախագահը

5.13.1. ընտրուում է Խորհրդի կողմից եւ կազմից, քուէարկող ձայների պարզ մեծամասնութեամբ Համագումարի ժամանակ, մեկ տարի ժամկէտով,

5.13.2. ընտրուում է 1 տարի ժամկէտով: Կազմակերպութեան միեւնոյն լիիրաւ անդամը կարող է ընտրուել Նախագահ 4 տարի անընդմէջ: 4 տարի անընդմէջ Նախագահ ընտրուած միեւնոյն Լիիրաւ անդամի համար Նախագահ ընտրուելու իրաւունքը սահմանափակուում է 1 տարով,

5.13.3. թեկնածուն առաջադրուում է Խորհրդի անդամի կողմից,

5.13.4. Խորհրդի անդամը կարող է ինքնառաջադրուել Նախագահի թեկնածու,

5.13.5. վարում է Խորհրդի նիստերը եւ տարեկան Համագումարը, իսկ նրա բացակայութեան դէպքում նիստերը վարում է Գործադիր տնաւրէնը կամ Խորհրդի որեւէ անդամ,

5.13.6. առանց լիազաւրագրի ներկայացնում է Կազմակերպութիւնը՝ պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպէս նաեւ փիզիկական եւ իրաւաբանական անձանց, աւտարերկրեայ պետութիւններում եւ միջազգային կազմակերպութիւնների հետ փոխյարաբերութիւններում,

5.13.7. Խորհրդի կողմից Գործադիր տնաւրէն ընտրելուց յետոյ կնքում է պայմանագիր վերջինիս հետ,

5.13.8. Նախագահը հաշուետու է Խորհրդին,

5.13.9. Նախագահին վաղաժամկէտ պաշտաւնից ազատելու որոշումն ընդունուում է Խորհրդի կողմից Խորհրդի քուէարկող ձայների 2/3 մեծամասնութեամբ, բայց ոչ աւելի վաղ, քան Նախագահի պաշտաւավարման մեկնարկից 3 ամիս յետոյ:

5.14. Գործադիր տնաւրէնը

5.14.1. ընտրուում է կամ վերընտրուում Խորհրդի կողմից, մեկ տարի ժամկէտով: Եթե Գործադիր տնաւրէն է նշանակուում Խորհրդի անդամներից որեւէ մեկը, ապա Խորհրդի անդամի թափուր տեղը լրացնում է Համագումարի ընթացքում Խորհրդի ընտրութեան ժամանակ, յաջորդ ամենաշատ քուէներ ստացած անդամը,

5.14.2. Գործադիր տնաւրէնի թեկնածուին առաջադրում են Խորհրդի անդամները: Եթե Գործադիր տնաւրէնի թեկնածու է առաջադրուում Խորհրդի անդամներից մեկը, ապա Գործադիր տնաւրէնի ընտրութեան քուէարկութեանը այդ անդամը չի մասնակցում,

5.14.3. Համակարգում է Կազմակերպութեան մարմինների աշխատանքը եւ իրականացնում է Կազմակերպութեան գործունեութեան ընթացիկ կառավարումը,

5.14.4. ապահովում է Խորհրդի եւ Համագումարի որոշումների կատարումն ու վերահսկողությունը,

5.14.5. իրականացնում է Խորհրդի կողմից հաստատուած հիմնական միջոցառումների կազմակերպումը եւ աշխատանքային տարեկան պլանների ու ծրագրերի իրագործումը,

5.14.6. առանց լիազաւրագրի ներկայացնում է Կազմակերպությունը՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպէս նաեւ փիզիկական եւ իրաւաբանական անձանց, աւտարերկրեայ պետություններում եւ միջազգային կազմակերպությունների հետ փոխյարաբերություններում,

5.14.7. ստորագրում է այդ փաստաթղթեր,

5.14.8. ստորագրում է Կազմակերպության դրամատնտեսական փաստաթղթերը, յուշագրերը եւ յայտարարությունները, լուծում է Կազմակերպության դրամական եւ տնտեսական գործունեության հետ կապուած հարցերը,

5.14.9. հաստատում է Կազմակերպության գոյքի աւգտագործման եւ գործունեության տարեկան հաշուետուությունները, որոնք Վերստուգողի եզրակացության հետ միասին տարին մեկ անգամ ներկայացնում է Խորհրդի հաստատմանը,

5.14.10. տնաւրինում է Կազմակերպության ցանկացած տեսակի եւ քանակի գոյքը, այդ թուում՝ դրամական միջոցները՝ Խորհրդի կողմից հաւանության արժանացած բիւջէի հիմնական ուղղությունների սահմաններում, նրա անունից կնքում է պայմանագրեր եւ համաձայնագրեր, տալիս է լիազաւրագրեր, բացում եւ փակում է բանկային հաշիւներ, յայցեր է ներկայացնում դատարան եւ հանդէս է գալիս դատարանում,

5.14.11. կազմում է Կազմակերպության հաստիքացուցակը եւ հաստատում տարեկան ծախսերի նախահաշիւը:

5.14.12. Կազմակերպության ներսում ձեւաւորում է աշխատակազմ, սահմանում է աշխատանքային գործունեության ընթացակարգերը, արձակում հրամաններ եւ հետեւում դրանց պատշաճ կատարմանը, հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանաւնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թուում՝ նրա առանձնացուած ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական եւ այդ կանաւնները,

5.14.13. սահմանում է Կազմակերպության աշխատողների նկատմամբ խրախուսանքի եւ տոյժի միջոցներ կիրառելու կարգը, աշխատանքային աւրէնսդրությամբ սահմանուած կարգով աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսանք, ենթարկում է կարգապահական տոյժերի,

5.14.14. իրականացնում է այդ կառավարման գործառույթներ, որոնց կատարումը ներառուած չեն մեւս կառավարման մարմինների լիազաւորութիւններում:

5.15. Վերստուգողները

5.15.1. Կազմակերպութեան գլխաւոր վերահսկողական մարմինն են,

5.15.2. Վերստուգողները ընտրուում են Կազմակերպութեան Լիիրաւ անդամներից, տարեկան Համագումարի ժամանակ՝ մեկ տարի ժամկէտով եւ իրենց գործունեութիւնն իրականացնում են այս կանաւնադրութեան դրոյթների հիման վրայ: Վերստուգողի թեկնածուներին առաջադրում է Անուանակարգային յանձնաժողովը նախապես՝ մինչեւ տարեկան համագումարը: Վերստուգող են դառնում Համագումարի ժամանակ առաւելագոյն քուէ ստացած առաջին 2 թեկնածուները,

5.15.3. Վերստուգողները պարտաւոր են տարին մեկ անգամ անցկացնել Կազմակերպութեան դրամատնտեսական գործունեութեան եւ Կազմակերպութեան ներքին փաստաթղթաշրջանառութեան, որակական ստուգում, Կազմակերպութեան կողմից տրամադրած փինանսական միջոցներով,

5.15.4. Վերստուգողները կարող են որոշում կայացնել՝ միայն իրենց նիստին պարտադիր ներկա անդամների մասնակցությամբ: Որոշումը պետք է լինի միաձայն,

5.15.5. իրաւունք ունեն ծանաւթանալ Կազմակերպութեան գործունեութեանն առնչուող բոլոր փաստաթղթերին,

5.15.6. իրաւունք ունեն գրաւոր կարգով պարտադիր քննարկման ենթակայ առաջարկութիւնները ներկայացնել Կազմակերպութեան մարմիններին, որոնք պարտաւոր են ներկայացնել գրաւոր պատասխաններ,

5.15.7. իրաւունք ունեն պահանջել եւ ստանալ Կազմակերպութեան գործունեութեան վերաբերեալ տեղեկութիւններ,

5.15.8. իրականացնում են Կազմակերպութեան կանաւնադրութեամբ կամ Համագումարի որոշմամբ նախատեսուած այդ լիազաւորութիւններ,

5.15.9. ուսումնասիրում են Կազմակերպութեան գործունեութեան համապատասխանութիւնը Կազմակերպութեան կանաւնադրութեանը,

5.15.10. Գործադիր տնաւրէնին, Նախագահին եւ Խորհրդին ներկայացնում են առաջարկութիւններ եւ եզրակացութիւններ Կազմակերպութեան գործունեութեան բարելաւման ուղղութեամբ,

5.15.11. Վերստուգողները ներկայացնում են եզրակացութիւն տարեկան Համագումարների ժամանակ, որն առնուազն պարունակում է տուեալներ՝ Կազմակերպութեան գոյքի եւ ստացման աղբեւրների, Կազմակերպութեան իրականացրած ծրագրերի եւ դրանց արդիւնաւէտութեան, ծրագրերի իրականացման

ընթացքում ծախսուած միջոցների վերաբերեալ, ինչպէս նաեւ ներքին կարգերի, կանաւնադրութեան եւ ռազմավարութեան պահպանման վերաբերեալ:

5.15.12. Վերստուգողները արտահերթ Համագումարի ժամանակ կարող են ներկայացնել եզրակացութիւններ Համագումարների միջեւ ընկած ժամանակահատուածի վերաբերեալ:

5.16. Անուանակարգային յանձնաժողովը

5.16.1. Անուանակարգային յանձնաժողովի հիմնական գործառոյթը Կազմակերպութեան Խորհրդի անդամների, Վերստուգողների եւ Անվանակարգային հանձնաժողովի անդամների թեկնածութիւններ առաջադրելն է,

5.16.2. Անուանակարգային յանձնաժողովը ընտրուում է տարեկան Համագումարի ժամանակ՝ մէկ տարի ժամկետով,

5.16.3. Անուանակարգային յանձնաժողովի թեկնածուներին առաջադրում է Անուանակարգային յանձնաժողովը նախապես՝ մինչեւ տարեկան համագումարը,

5.16.4. Անուանակարգային յանձնաժողովում անդամներ չառաջադրուելու կամ ինքնաբացարկ յայտարարելու դէպքում, որի արդիւնքում Անուանակարգային յանձնաժողովը պակաս է երկու հոգուց, նշուած գործառոյթները Անուանակարգային յանձնաժողովի փոխարէն իրականացնում է Խորհուրդը,

5.16.5. Անուանակարգային յանձնաժողովը բաղկացած է առաւելագոյնը երեք հոգուց,

5.16.6. Կազմակերպութեան աշխատակից հանդիսացող Լիիրաւ անդամները կարող են լինել Անուանակարգային յանձնաժողովում, բայց ոչ աւել քան մեկ ներկայացուցիչ,

5.16.7. Անուանակարգային յանձնաժողովը ուսումնասիրում է Կազմակերպութեան Խորհրդի, Վերստուգողների եւ Անուանակարգային յանձնաժողովի անդամութեան պահանջներին բաւարարող թեկնածուների ցուցակը, հաւաստիանում այդ թեկնածուների՝ ընտրուելու դեպքում Կազմակերպութեան այդ մարմիններում գործունեութիւն ծավալելու պատրաստակամութեան վերաբերեալ եւ կազմում է Խորհրդի անդամների, Վերստուգողների եւ Անուանակարգային յանձնաժողովի անդամների ընտրութեան քուէաթերթիկ,

5.16.8. Անուանակարգային յանձնաժողովը աշխատանքային հարցերի քննարկման նիստի համար քուորում ունի, եթե ներկայ են առնուազն երկու հոգի: Յանձնաժողովը պարտաւոր է կազմել նիստերի արձանագրութիւններ, որոնք յանձնուում են Խորհրդի նախագահին եւ պահպանուում են Կազմակերպութեան փաստաթղթաշրջանառութեան ընթացակարգերին համապատասխան,

5.16.9. Անուանակարգային յանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկուել Կազմակերպութեան Խորհրդի անդամները եւ վերստուգողները,

5.16.10. Անուանակարգային յանձնաժողովի անդամ են դառնում Համագումարին ներկայ առաւելագոյն եւ/կամ հաւասար քուէ ստացած առաջին 3 թեկնածուները: Սոյն կանաւնադրութեամբ չսահմանուած դրոյթները կարգաւորուում է Համագումարին ներկայ մասնակցողների ձայների 3/4-ի ձայների մեծամասնութեան քուեարկութեամբ հաստատուած կանաւնակարգով:

6. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

6.1. Համագումարը կազմուած է կազմակերպութեան բոլոր Լիիրաւ անդամներից:

6.2. Համագումարը իր որոշումները ընդունում է Համագումարին մասնակից Լիիրաւ անդամների ձայների պարզ մեծամասնութեամբ, եթե այդ բան նախատեսուած չէ կանաւնադրութեամբ:

6.3. Համագումարը իր որոշումները կայացնում է տարեկան մեկ անգամ Համագումար անցկացնելով, որի անցկացման ժամանակը, տեղը եւ աւրակարգը սահմանում է Խորհուրդը: Արտահերթ Համագումարը գումարուում է Կազմակերպութեան Լիիրաւ անդամների առնուազն մեկ երրորդի, Խորհրդի անդամների երկու երրորդի, նախաձեռնութեամբ՝ ոչ ուշ, քան նախաձեռնութիւնից հինգ աւրուայ ընթացքում: Արտահերթ Համագումարը իրաւազաւր է, եթե գումարուել է սոյն կանաւնադրութեան համապատասխան եւ Համագումարին մասնակցում է Կազմակերպութեան բոլոր Լիիրաւ անդամների ընդհանուր թուի կէսից աւելին:

6.4. Հերթական եւ արտահերթ Համագումարը գումարելու ժամանակի եւ վայրի մասին Համագումարի մասնակիցները ծանուցուում են Կազմակերպութեան կանաւնադրութեամբ սահմանուած ժամկէտներում, սակայն ոչ ուշ, քան Համագումարը անցկացնելու աւրուանից հինգ աւր առաջ:

6.5. Հեռակայ Համագումար հրաւիրելու որոշումը կայացնում է Խորհուրդը՝ ոչ պակաս քան ձայների 3/4-ի հիման վրայ: Հրաւիրելու պատճառ կարող են հանդիսանալ կանաւնադրութեան փոփոխութիւնները եւ կանաւնադրութեամբ եւ ՀՀ աւրէնքներով չնախատեսուած հարցերին հրատապ լուծումներ տալու անհրաժեշտութիւնից ելնելով:

6.6. Հեռակայ Համագումարը հրատապ հարցերի քննարկման համար է եւ չի նախատեսում նոր խորհրդի կամ գործադիրի ընտրութիւն, այդ նախատեսուած է բացառապէս աւրակարգային հարցերի քննարկման եւ հաստատման համար:

6.7. Հեռակայ կարգով Համագումարի անցկացման պարագայում նախապէս՝ առնուազն 5 աւր առաջ, Լիիրաւ անդամներին ուղարկուում է Համագումարի աւրակարգը եւ առաջարկուող փոփոխութիւնների վերաբերեալ նեւթերը՝ առկայութեան պարագայում:

6.8. Համագումարի բացառիկ իրաւասութիւնն է.

6.8.1. Կազմակերպութեան գործունեութեան հետ կապուած ցանկացած հարցի վերջնական լուծման իրաւունքը,

6.8.2. Լիիրաւ անդամների եւ Խորհրդի առաջարկով Կազմակերպութեան կանաւնադրութեան հաստատումը եւ փոփոխումը, լրացումների կամ նոր խմբագրութեամբ կանաւնադրութեան հաստատումը,

6.8.3. Կազմակերպութեան ռազմավարութեան, կառուցուածքի հաստատումը,

6.8.4. Վերակազմակերպման մասին որոշում ընդունելը ընդհանուր Լիիրաւ անդամների ձայների 4/5 մեծամասնութեամբ,

6.8.5. Լուծարման մասին որոշում ընդունելը, ընդհանուր Լիիրաւ անդամների ձայների 4/5 մեծամասնութեամբ,

6.8.6. Խորհրդին անվստահութիւն յայտնելը ընդհանուր Լիիրաւ անդամների ձայների 2/3 մեծամասնութեամբ արտահերթ Համագումարի ժամանակ:

6.8.7. Այդ իրաւաբանական անձ ստեղծելու մասին որոշում կայացնելը, այդ կազմակերպութիւններում Կազմակերպութեան մասնակցութեան մասին որոշումների ընդունումը,

6.8.8. Կազմակերպութեան մարմինների իրաւական ակտերի պահանջներին եւ կանաւնադրութեանը հակասող որոշումների գործողութիւնը դադարեցնելու մասին որոշում կայացնելը,

6.8.9. Կազմակերպութեան կառուցուածքի հաստատումը՝ Համագումարին մասնակից եւ քուեարկելու իրաւունք ունեցող Լիիրաւ անդամների ձայների մեծամասնութեամբ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲԵՒՐՆԵՐԸ ԵՒ ԱՒԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպութիւնը որպէս սեպհականութիւն ունի առանձնացուած գոյք եւ իր պարտաւորութիւնների համար պատասխանատու է այդ գոյքով:

7.2. Հիմնադիրների եւ անդամների կողմից Կազմակերպութեանը յանձնուած գոյքը Կազմակերպութեան սեպհականութիւնն է: Կազմակերպութիւնն իր գոյքն ու դրամական միջոցներն աւգտագործում է կանաւնադրութեամբ սահմանուած նպատակներով:

7.3. Կազմակերպութիւնը որպէս սեպհականութիւն կարող է ունենալ շէնքեր, շինութիւններ, բնակարանային փոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքաւորումներ, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այդ արժեթղթեր եւ աւրէնքով չարգելուած այդ գոյք:

7.4. Կազմակերպութեան սեպհականութիւնը գոյանում է անդամների ներդրումներից, անդամավճարներից, ձեռնարկատիրական գործունեութիւնից ստացուած միջոցներից, իր ստեղծած կամ իր մասնակցութեամբ այդ կազմակերպութիւններից ստացած միջոցներից, նուիրատուութիւններից, նուիրաբերութիւններից, ՀՀ պետական բիւջէից դրամական մուտքերից, դրամաշնորհներից, հանգանակութիւններից եւ աւրէնքով չարգելուած այդ աղբեւրներից:

7.5. Կազմակերպութիւնն իր սեպհականութիւնը, այդ թուում՝ ձեռնարկատիրական գործունեութիւնից ստացուած միջոցներն աւգտագործում է միայն կանաւնադրական նպատակների եւ խնդիրների իրականացման համար:

7.6. Եթե Կազմակերպութիւնը հաշուետու տարուայ ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից փինանսաւորուել է 10 միլիոն եւ աւելի Հայաստանի Հանրապետութեան դրամի չափով, ապա այդ միջոցների աւգտագործման վերաբերեալ Պետական եկամուտների կոմիտէի (Լիազաւր մարմին) սահմանած հաշուետուութիւնը, որպէս յատուկ նպատակի դրամական հաշուետուութիւն, ենթակայ է պարտադիր աուդիտի՝ «Աուդիտորական գործունեութեան մասին» աւրէնքի համաձայն:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՈՒԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8.1. Կազմակերպութիւնը, ըստ գործող աւրէնսդրութեան, իրաւունք ունի ստեղծելու մասնաճիւղեր, ներկայացուցչութիւններ եւ հիմնարկներ, որոնք գործում են Հայաստանի Հանրապետութեան տարածքում եւ աւտարերկրեայ պետութիւններում:

8.2. Կազմակերպութեան ներկայացուցչութիւնները, մասնաճիւղերն ու հիմնարկները առանձին իրաւաբանական անձինք չեն եւ գործում են Կազմակերպութեան կանաւնադրութեան դրոյթների հիման վրայ:

8.3. Կազմակերպութեան գործունեութեան տարածքը Հայաստանի Հանրապետութիւնն է եւ այն երկրները, որտեղ Կազմակերպութիւնն ունի ներկայացուցչութիւններ, մասնաճիւղեր եւ անդամներ:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Կազմակերպութեան վերակազմակերպումը եւ լուծարումն իրականացուում է աւրէնքով սահմանուած կարգով:

9.2. Կազմակերպութեան հարկադիր վերակազմակերպումը կամ լուծարումը կարող է կատարուել միայն դատական կարգով:

9.3. Կազմակերպութեան գործունեութիւնը համարուում է աւարտուած, իսկ Կազմակերպութիւնը՝ լուծարուած, իրաւաբանական անձանց ընդհանուր պետական գրանցամատեանում համապատասխան գրառում կատարելու պահից:

9.4. Կազմակերպութիւնը լուծարուելու դէպքում պարտատէրերի պահանջները բաւարարելուց յետոյ մնացած գոյքն ուղղուում է Կազմակերպութեան կանաւնադրութեամբ նախատեսուած նպատակներին, դրա անհնարինութեան դէպքում դրամական միջոցները փոխանցուում են պետական բիւջէ, իսկ այդ գոյքը սեպհականութեան իրաւունքով փոխանցուում է

Հայաստանի Հանրապետութեանը՝ ի դէմս Կառավարութեան, բացառութեամբ աւրէնքով սահմանուած դէպքերի:

Սոյն կանաւնադրութիւնը կազմուած է 12.07.2025թ. եւ բաղկացած է 18 թերթից:

45